

Սուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թիւ 182

Յատկանշականը եւ հրամայականը – Երբ մինչ Պօղոսը սկսում է իր ուսուցումը սրբագործութեան վարդապետութեան առթիւ Հռովմայեցի ճում, նա չի սկսում տարով մեզ անելու եւ չ'անելու մի ցուցակ. փոխարէն, նա նախ խօսում է այդ ինչի մասին որ Աստուած է կատարել (համարներ 1-8): Աստուածաբաններ սրան կոչում են որպէս «յատկանշականը», այսինքն այն ինչ որ Աստուած կատարել է: Միայն յատկանշականը բացատրելուց յետոյ է որ Պօղոսը ապա սկսում է հրահանգել հաւատացեալներին թէ ինչպէս նրանք այժմ պիտի ապրեն (համարներ 11-13): Աստուածաբանները սրան կոչում են որպէս «հրամայականը», այսինքն այն ինչ որ մենք կոչւած ենք անելու: Յատկանշականը (այն ինչ որ մենք ենք) գալիս է նախքան հրամայականը (այն ինչ որ մենք կոչւած ենք անելու). եւ հրամայականը հաստատուած է յատկանշականի վրայ: Այս ընդգծում է դրքային եւ յառաջադիմական սրբագործութեան միջեւ եղած տարբերութիւնը: Աստուած արդէն բաժանել է մեզ եւ կտրել է մեզ աշխարհից, եւ Քրիստոսում մենք արդէն Աստուծոյ զաւակներն ենք՝ սրբւած ու ուղղարար (Հռովմայեցի 8:16, Ա. Կորնթացի 1:30, 6:11). եւ ուստի Աստուած այժմ կանչում է մեզ ապրել ըստ այս իրականութեան: Տարով Իր Հոգին մեզ, Աստուած այժմ կանչում է մեզ որ Հոգով քայլենք (Հռովմայեցի 8:4, 9, 11, Գաղատացի 5:16, 25).

Հաւատացեալի յարաբերութիւնը մեղքի հետ – Վերակազմ աստուածաբանութիւնը հաստատում է որ անկման պատճառով բնական մարդը գալիս է այս աշխարհի հոգեւորապէս ու բարոյականապէս մեռած՝ պղծւած իր մարմնում, հոգում, մտքում, սրտում, զգացումներում ու կամքում. ունենալով ոչ կարողութիւն ոչ էլ կամեցողութիւնը որոնելու Աստուծոյ եւ ապրելու Նրան պատուող մի կեանք (Ծննդոց 6:5, Հռովմայեցի 3:10-18, Ա. Կորնթացի 2:14): Առաւել, Ադամում բոլոր մարդկութիւնը մերժեց Աստուծոյ որպէս իրենց Տէրը եւ ուստի Աստուած մատնեց նրանց մի ուրիշ տիրոջ՝ այսինքն մեղքին, որին տրուեց օրինաւոր իշխանութիւն ամբողջ մարդկութեան վրայ: Այսպիսով, բնական մարդը դարձաւ մեղքին գերի, ապրելով մեղքի գործութեան ու իշխանութեան տակ (Հռովմայեցի 6:20, Եփեսացի 2:1-3):

Վերածնութեամբ Սուրբ Հոգին շնորհալիօրէն եւ գերբնականօրէն փոխում է մեղաւոր մարդու բնութիւնը՝ յարուցանելով նրան հոգեւոր մահից դէպի հոգեւոր կեանք: Այս անելով Նա մեղաւորի քարտէն սիրտը մարմնեղէն սրտի է փոխում, լուսաւորում է նրա միտքը հասկանալու Աստուծոյ ճշմարտութիւնը, ցանկելով նոր ցանկութիւններ Աստուծոյ բաների համար, եւ զօրադրելով նրան պատասխանելու Իր աւետիսի կոչը: Ուստի Հոգին ազդեցիկօրէն քաշում է անձին դէպի Քրիստոս, որը ապա պատասխանում է հաւատքով եւ փրկւում է (Բ. Օրինաց 30:6, Եզեկիէլ 36:25-27, Եփեսացի 2:1, 4-5): Նրանց ում Սուրբ Հոգին վերածնում է դառնում են նոր ստեղծւածներ՝ նոր մտքերով, նոր ցանկութիւններով, նոր համոզումներով, նոր նախապատուութիւններով, ու նոր կեանքերով (Բ. Կորնթացի 5:17):

Ուստի մի հիմնական փոփոխութիւն է տեղի ունեցել հաւատացեալների մեղքի հետ եղած յարաբերութեան մէջ: Նախքան մեր փրկութիւնը մենք մեղքին կենդանի էինք, մենք մեղքի ստրուկներ էինք, եւ յօժարութեամբ կատարում էինք այն ինչ որ մեր տէրը կանչում էր մեզի անելու: Սակայն, ճիշտ այնպէս որ մի տէր կորցնում է իր ստրուկի վրայ ունեցած իր իշխանութիւնը երբ ստրուկը մեռնի, նմանապէս նրանք որոնք միացած են Քրիստոսին մեռան Նրա հետ, նրանց հին մարդը խաչեցաւ Նրա հետ, եւ ուստի նրանք մեռան մեղքին (Հռովմայեցի 6:2, 6-7, 16-18): Եւ ինչպէս Քրիստոսը յարութիւն առաւ, այնպէս էլ նրանք յարութիւն են առել Նրա մէջ մի նոր կեանքի: Քրիստոսում մենք ազատագրուել ենք մեղքի տիրապետութիւնից: Մեղքը այլեւ չ'ունի որեւէ իրաւունք կամ իշխանութիւն մեր վրայ (Հռովմայեցի 6:14, 22): Փոխարէն, մենք այժմ ունենք մի նոր տէր, Տէր Աստուածը. եւ մենք հիմա Նրա ստրուկներն ենք, որին ծառայում ենք յօժարութեամբ (Ա. Պետրոս 2:16): Այս է մեր նոր բնութիւնը՝ մեղքին մեռած իսկ ուղղարարութեան կենդանի (Յովհաննէս 8:36, Ա. Պետրոս 2:24): Ուրեմն ամփոփելով, Հռովմայեցի ճում Պօղոսը ասում է «իմացէ՛ք թէ ով էք դուք», եւ ապա «եղէք այդ որ էք»: Իրականում, այս է Աստուծոյ նպատակը մեր սրբագործութեան մէջ, որ մեզի դարձնի գործնականում այդ ինչ որ ենք դիրքում: Մենք սուրբ ենք, եւ կոչւած ենք սուրբ դառնալու:

Ինչո՞ւ են հաւատացեալներ մեղանչում – Ադամի մեղքի ու անկման պատճառով մարդկութիւնը ժառանգեց ոչ միայն Ադամի մեղքի յանցանքը (Հռովմայեցի 5:18-19), այլ նաեւ մի պղծւած կամ ապականուած բնութիւն (Եփեսացի 2:1-3): Իր փոխանորդական կեանքով ու մահով Յիսուս Քրիստոսը վճարեց մեր մեղքի ամբողջական տուգանքը եւ յազգեցրեց Աստուծոյ արդար պահանջը մեր փոխարէն: Թէպէտ արդարացած Քրիստոսով մենք ազատուել ենք մեղքի յանցանքից, սակայն մեղքի ապականութիւնը դեռ մեզ հետ է:

Թէպէտ մենք նոր ստեղծւածներ ենք ի Քրիստոս, ու թէպէտ Հոգին մեզ տուել է նոր սիրտ, նոր միտք, ու նոր կամք, սակայն այդ չի նշանակում որ մենք արդէն ամբողջովին վերանորոգուել ենք: Հոգին չի վերացնում կամ դուրս հանում մեր ընկած բնութեան բոլոր մնացորդը մեր դարձման պահին: Եւ թէկուզ մեղքի իշխանութիւնն ու գործութիւնը կտրուել են մեր կեանքերում, սակայն եւ այնպէս մեղքի ներկայութիւնը դեռեւս մեզ հետ է, եւ կ'ազդի մեզ մեր կեանքի ամեն օրում եւ ամեն պահում, մինչեւ որ այդ վերացի մեր փառաւորման մէջ: Ուստի մենք մտնում ենք մեղքի դէմ եղած մի կենսատեւ պայքարի մէջ, եւ երբէք չ'պիտի աջաթող անել դրա ազդեցութիւնը մեր կեանքերում (Մատթէոս 26:41, Կողոսացի 3:5, Եբրայեցի 12:1): Սրա համար է որ Մարտին Լութերը նկարագրեց հաւատացեալին որպէս «simul iustus et peccator», այսինքն «միեւնոյն ժամանակ արդար եւ մեղաւոր»: